ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱՇԵՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Թ.*

1887 թ. հիմնադրված Հնչակյան կուսակցության գործիչները (հիմնականում՝ արևմտահայ) ճիշտ չէին համարում Լոնդոնում գտնվող իրենց կուսակցության կենտրոնի գործունեությունը՝ Ավ. Նազարբեկի մենատիրական ղեկավարությամբ (դժգոհությունը հատկապես մեծ էր Մարո Նազարբեկից): «Արփիարականներ» անվանված գործիչները՝ Միհրան Տամատյանը, Արփիար Արփիարյանը, Միհրան Սվազլյանը, Լևոն Մկրտիչյանը և ուրիշներ[1], համոզված, որ Թուրքիայում արդյունաբերական պրոլետարիատի բացակայության պայմաններում սոցիալիզմի համար մղվող պայքարն անհեռանկար է և այլևս «աւելորդ ու վնասակար Հայկական հարցի լուծման համար», հանդես եկան միայն ազգային-ազատագրական պայքար մղելու պահանջով:

Նրանք արևմտահայ իրականության համար ժամանակավրեպ էին համարում սոցիալիզմի տեսությունը և գտնում էին, որ այն զուր տեղը լոկ կջլատի իրենց ուժերը: 1896 թ. առանձնացան և 1898 թ. հիմնադրեցին Վերակազմյալ հնչակյաններ կուսակցությունը (այսուհետև՝ ՎՀԿ)[2]: Մի քանի անգամ նրանք փորձեցին վերամիավորվել (օրինակ, 1902-ի մարտին՝ «խախուտ հիմերու վրայ, քանի որ բուն գժտութեան խնդիրը, ընկերվարութիւնը (սոցիալիզմը), բոլորովին մէջտեղէն վերացված չէր)»[3], սակայն

---

* Պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, sargsyansuren@yandex.ru, հոդվածի ընդունման օրը՝ 1.03.2019, գրախոսման օրը՝ 2.04.2019:

[1] Այդ մասին պատկերացում են տալիս Ապահի, Ռշտունու, Տամատյանի, Արփիարյանի և մի շարք այլ գործիչների նամակներ. տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ապահ Պետրոսյանի ֆ. N 453, ց. 1, գ. 6, թ. 1:

[2] Տե՛ս **Հովհաննիսյան Գ.,** Վերակազմյալ հնչակյան կուսակցություն [Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.), Ե., 2003]:

[3] **Տեփոյեան Պ.,** Միհրան Տամատեան 1863–1946 թթ., Պեյրութ, 1964, էջ 105:

1906 թ. շարունակվող խմորումների պատճառով, դարձյալ տրոհվեցին: Ընդհանրապես, Հնչակյան կուսակցության մեջ պառակտումներն այնքան խորացած ու բազմաբնույթ էին, որ «այնտեղ մայրը իր զաւակը չէր ճանչնար»[4]:

Վերակազմյալների մի հատվածն արմենականների նման դեմ էր արևմտահայերի ազատագրության հարցը սոցիալիստական վարդապետությանն առնչելուն և ցուցադրական ու ահաբեկչական գործողություններին: Սակայն Վահե Արզույանը սակավաթիվ համախոհների հետ որդեգրում է ահաբեկչության ուղին: Դա էլ նոր պառակտման առիթ է դառնում: Լևոն Մկրտիչյանը, Վահան Թեքեյանը, Սուրեն Պարթևյանը, Սարգիս Մալեմեզյանը, Միհրան Տամատյանը և ուրիշներ բաժանվում են կուսակցությունից: Առաջանում են՝ չափավոր կամ «Ազգյան» (1907 թ. ապրիլի 20-ից Ս. Պարթևյանի խմբագրությամբ լույս տեսած «Ազգ» թերթի անունով) և արմատական թևերը[5]: Վերջիններս աստիճանաբար որդեգրեցին չափավոր գաղափարներ, իսկ նրանց ամերիկյան հատվածը 1919-ին իրեն հռչակեց Ազատական կուսակցություն, որը 1921-ին միավորվեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ ստեղծելով Ռամկավար ազատական կուսակցությունը[6]:

Վերակազմյալներն ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես մամուլի ասպարեզում: Նրանք հրատարակեցին «Ձայն Հայրենեաց», «Մարտ», «Նոր կեանք», «Ազատ բեմ», «Ազգ» և մի քանի այլ պարբերականներ, որոնք քիչ թե շատ ուսումնասիրված են, իսկ ներկայացվող «Հայկաշենը»՝ բոլորովին[7]: ՎՀԿ կենտրոնական վարչության օրգան «Հայկաշեն» ազգային, գրական, քաղաքական ամսաթերթը սկսել է լույս տեսնել 1917 թ. նոյեմբերի 1-ից Թիֆլիսում[*]: Մինչև թերթի լույսընծայումը գաղափարամոտ պարբերականներից մեկում ազդարարվում է. «Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Կովկասի կեդրոնական մարմնոյ կողմից»

---

[4] **Դարբինեան Ա.,** Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 181-182:

[5] Տե՛ս **Ղազարեան Վ.,** Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պեյրութ, 1978, էջ 25:

[6] Այս մասին մանրամասն տե՛ս **Սարգսյան Ս.,** Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.), Ե., 2009:

[7] Տե՛ս **Սարգսյան Ս.,** Վերակազմյալ հնչակյան մամուլի պատմությունից. «Մարտ», «Նոր կեանք» [ՀԽՍՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 1995, N 2, էջ 106–114], **նույնի՝** «Ձայն հայրենեաց» (1899–1911), Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, հ. 2, Ե., 2017, էջ 628–639:

[*] Թերթի խմբագրության հասցեն էր՝ Թիֆլիս, Բեհբության փողոց, թիվ 30:

յուրաքանչյուր ամսի 15-ին 32 մեծադիր էջերով և գեղարվեստորեն ձևավորված կազմով լույս կտեսնի «Հայկաշեն» թերթը[8]:

Նույն հայտարարության մեջ նշվում էր, որ թերթն իր շուրջը պետք է համախմբի «Հայ ազգայնականութեան հաւատացող» բոլոր ուժերին և ջանքեր գործադրի, որ բոլոր ազգային կուսակցությունները ղեկավարելու ունակ գործիչներին համախմբի և կազմի «կեդրոնական կորիզը ազատական և ազգայնական տարրերու»[9]:

«Հայկաշենի» հրատարակութեան առթիւ» ՎՀԿ-ի կենտրոնական վարչության ստորագրած անդրանիկ առաջնորդողում նշվում է, որ իրենց թերթն սկսում է լույս տեսնել այնպիսի դժվարագույն պայմաններում, երբ հոգսերով ծանրաբեռնված, բայց անկախության ձգտող ժողովուրդները փորձում են կերտել իրենց վաղվա օրը: Նրանք «քաղաքական և քաղաքացիական կրկնակ խոհականութեամբ» ենթադրում են, որ «ոգորումի գերագույն պրկումէն յետոյ պիտի սկսի բիւրեղացումը նոր մարդկութեան մը նորագոյն ըմբռնումներուն և գոյակենցաղին»[10]: Հետևաբար՝ հայերն էլ, որ ամենամեծ զոհողություններն էին ունեցել պատերազմի տարիներին, անբավարար հետաքրքրություն դրսևորեցին վաղվա օրվա հանդեպ: Հայերի համար ստեղծված բարդ իրավիճակից հաղթանակած դուրս գալու համար անհրաժեշտ էր կշռադատված և միասնական գործելակերպ դրսևորել:

Հայկական հարցի լուծման ուղիներ գտնելը ցավատանջ է եղել հայ ժողովրդի համար, իսկ տվյալ պահին անհամեմատ ավելի բարդ իրավիճակ էր ստեղծվել «մանաւանդ մեզ զգետնել ձգտող հարուածներէն յետոյ»[11]: Հայ ժողովուրդն այդ ահեղ հեղաբեկումներից հետո իսկապես հոգեկան բացառիկ ուժի և համախմբվածության կարիք ուներ, որպեսզի կարողանար հնարավորինս ապահով դուրս գալ ստեղծված կացությունից: Ավելին, թերթի հեղինակների կարծիքով, ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ միջոցը համագործակցությունն էր, որը հարկավոր էր

[8] Տե՛ս Հայաստան, N 144, 29.X.1917:
[9] Նույն տեղում:
[10] Հայկաշեն, N 1, նոյեմբեր, 1917, էջ 1:
[11] Նույն տեղում:

ավելի խորացնել: Հենց դրան նպաստելու առաքելությամբ էր ասպարեզ իջնում «Հայկաշենը», որը «չպիտի առաջնորդուի նեղմիտ նկատումներով»[12]:

Հրատարակիչների ասելով՝ թերթը պետք է գնահատի և սատարի այն բոլոր ձեռնարկները, որոնց նպատակն է համագործակցության ամուր հիմքեր ստեղծելը հայկական միջավայրում գործող տարբեր քաղաքական ուժերի միջև, որոնք ապահովված կլինեն գործնական և իրական երաշխիքներով: Ավելին, ամեն ինչ պետք է անի, որ «լիպերալ ծրագիր ունեցող ազգայնական կուսակցութիւնները ի մի ձուլուին» և միասնական հզոր ուժ ստեղծեն, որն ի վիճակի կլինի ազգային հավաքական շահերը պաշտպանել «utopia-ներով սնանուող» զանազան հոսանքներից[13]: Համագործակցությունը ջատագովելով հանդերձ՝ «Հայկաշենը» շեշտում էր, որ համազգային շահերից ելնելով՝ նաև անողոք կքննադատի և անարգանքի սյունին կգամի բոլոր նրանց, ովքեր կփորձեն խաթարել միասնականության ոգին:

Խմբագրակազմը հայտարարում է, որ թերթը պետք է ունենա հետևյալ հիմնական բաժինները. 1) Հայկական դատ, 2) Ազգայնական շարժումը ժամանակակից պատմության ընթացքում և հայ ազգայնականությունը, 3) Համազգային կյանք, 4) Գրական-գեղարվեստական, 5) Միջազգային կյանք, 6) Ժամանակակից հայոց պատմության քննադատություն, 7) Կոտորածների վերաբերյալ նորագույն փաստաթղթեր: Վերջում ավելացնում է, որ «Հայկաշենը» ապահովված է նյութապես, նաև կարող աշխատակիցներով[14]: Գովելի է, որ թերթի գլխագրից անմիջապես հետո տրվում էր համարի բովանդակությունը. նշվում էին հոդվածների հեղինակներն ու դրանց վերնագրերը:

Անդրանիկ համարի «Թափառումներ իմ ցեղի նկարագիրներուն մէջ» հրապարակման մեջ անդրադառնալով հայ ժողովրդի պատմությանը՝ հոդվածագիր Վ. Թոթովենցը շեշտում է, որ հայ ազգն ունեցել է «դարերու հերոսական, անվեհեր, տառապող ու դիմացող, մաշուող և միշտ ստեղծագործող կեանք»[15], քայլել է ժամանակին համընթաց, որը շատ կարևոր հանգամանք է: Ուստի ցեղասպանության վերքերն էլ ժամանա-

[12] Նույն տեղում:
[13] Նույն տեղում, էջ 3:
[14] Հայաստան, N 50, 5.XI.1917, էջ 4:
[15] Հայկաշեն, N 1, էջ 7:

կի ընթացքում կսպիանան. մարտնչող հայ ժողովուրդը կշարունակի իր հերոսական ընթացքը, որովհետև նա արարող ու հաղթանակներ տարած էթնոս է: Ուրեմն, եզրակացնում է հոդվածագիրը, հայ ժողովուրդը, որ «դարաւոր մշտենջենական ըլլալու և ստեղծագործական տարերքն ունեցած է»[16], կհարատևի մշտապես: Միայն թե ափսոս, որ քաղաքական պայմանների ճնշման ներքո «ես»-ը հաճախ հակադրության մեջ է հայտնվել ամբողջական գաղափարախոսության, անհատը՝ հասարակության հետ:

Եվ թե ինչու՞ հայ անհատի հանճարը «օտար հորիզոններու տակ ունեցած է զարմանահրաշ փթթումներ», իսկ իր ժողովրդի միջավայրում երբեմն դառնում է անօգուտ, հոդվածագիրը պատասխանում է. «Մեր իրական հանճարները իզուր տեղը յաճախ կարծած են, որ իրենց թռիչքներու համար նեղ են հայ ժողովուրդի հասարակական սահմանները», առանց հասկանալու, որ փոքրաքանակ ժողովուրդը ևս կարող է ծնել ու սնել բարձր արժեքներ ու դրանց կրողներ[17]: Բայց ամեն անգամ, երբ այդ հանճարները փորձել են մտնել հայրենիքի սահմաններից ներս, տեղի մտավորականությունը սրերով է դիմավորել նրանց, և ինքը մնացել «միջակը»: Հանճարներն էլ ստիպված լքել են «միջակ մտաւորականութեան աւերներուն մէջ եղած» հայրենիքը[18]: Հեղինակը ցավով արձանագրում է, որ մեր դառնագին վիճակի պատճառը հենց այդ միջակության հանդգնությունն է եղել և նրա անհանդուրժողականությունը «դրսեցիների» նկատմամբ:

«Անմոլար ճանապարհ» հրապարակման մեջ նկարագրելով պատերազմի աշխարհակործան հետևանքները՝ հոդվածագիր Նորայր Գընթունին շեշտում է, որ հայ ժողովուրդը չպետք է խաբվի իրենց «սոցիալիստ» անվանող նյութապաշտների խոստումներից, որոնք, երկրի անտեր վիճակից օգտվելով, «բաժանական ոգի են քարոզում հեշտ տիրելու և շահագործելու յետին մտքով»[19]: Հայ ժողովուրդը պատերազմի փորձությունից ելնելու համար «մէկ անմոլար ճանապարհ ունի», գրում է հեղինակը. դա «ազգայնականութեան, հայրենասիրութեան» ճանապարհն

[16] Նույն տեղում, էջ 9:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում, էջ 10:
[19] Նույն տեղում:

է[20]: Դրանով առաջնորդվողներն են իսկական հայ հերոսները, այդ ճանապարհը որդեգրողներն անմահ են:

«Այժմէական հարցեր» հրապարակման հեղինակ Թաթուլը Ռուսաստանի օրինակով ցույց է տալիս, որ ամենուր տարածվել են սոցիալիստական գաղափարախոսությունն ու այն դավանող քաղաքական ուժերը, որը, սակայն, անընդունելի է հայ ժողովրդի դեպքում: Միակ ուղին համարելով ազգային համախմբվածությունն ու շուկայական տնտեսությունը և չվախենալով քննադատություններից՝ հեղինակը եզրակացնում է. «Մենք կը հաւատանք թէ այս սկզբունքները աւելի օգտակար են ու նպատակայարմար են հայ ժողովուրդին համար»[21]:

«Մեր յառաջիկայ գործելակերպը. ազատագրական հոսանքի վերլուծումը» ընդարձակ հրապարակման մեջ Լ. Թյությունջյանը, պատմական փոքրիկ էքսկուրս կատարելով, եզրակացնում է, որ ի դեմս կամավորական շարժման հայ ժողովուրդը ներկայացավ նորովի, ինքնակազմակերպման բարձր մակարդակով, որն էլ հույսեր է ներշնչում ապագայի նկատմամբ:

«Հայկական հարցի վերջին փուլերը» մեծածավալ հոդվածում հեղինակը՝ Պարթևը, Հայկական հարցի լուծումը գտնում է հայ ժողովրդին «իր նախկին անկախութիւնը վերադարձնելու իր պատմական հայրենիքին մէջ անդորր ու ինքնուրոյն կեանքն ապահովելու մէջ»[22]: Նա Հայկական հարցը համարում է հին պատմական իրողություն, որի ակունքները տեսնում է Արշակունյաց թագավորության վերջին շրջանում, երբ հայոց պետականությունն սկսեց պարբերաբար առկախվել: Այդ հարցը այդուհետև մնաց «մեր դարաւոր մարտիրոսութեան մէջ իբր իրական կեանքի ահաւոր երևոյթ մը»[23] և մշտական ուղեկիցը հայ ժողովրդի պատմության: Իսկ Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերում սկիզբ առավ Հայկական հարցի «դիւանագիտական բնոյթը»:

Համաշխարհային աշխարհակործան պատերազմի ժամանակ էլ, գրում է Պարթևը, ազգովին միացանք դաշնակիցներին և «մեր թիւն բաղդատմամբ ամենաշատ զոհերը տուինք դաշնակիցներուն ընդհա-

[20] Նույն տեղում, էջ 12:
[21] Նույն տեղում, էջ 1:
[22] Նույն տեղում, էջ 21:
[23] Նույն տեղում, էջ 22:

նուր դատին համար»[24]: Սակայն այս անգամ էլ արդյունք չունեցանք: Ընդհանուր առմամբ, արձանագրում է հոդվածագիրը, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը պարտական է հայերին, քանի որ XI դարից սկսած՝ Արևելքի բոլոր ավարառու ցեղերի արշավանքների առաջին դիմադրողը, առաջին զոհվողն ու իր արյան գնով ներխուժումների թափը կոտրողը հայն է եղել: Գոնե այս անգամ, նշում է հեղինակը, Եվրոպան կարողանա մարել հայերի նկատմամբ ունեցած պարտքը և նրանց ազատել թուրքական բռնատիրությունից: Իսկ մեր՝ հայերիս առաքելությունը պետք է լինի «մեծերուն ու հզորներուն այդ շահերուն տեսակէտներուն համաձայնեցումը Հայկական հարցը վճռելու համար»[25]:

Պարթևը նշում է. «Տաճկահայաստան քաղաքական թերմինը կը պարունակէ հայկական վեց նահանգներ միայն» (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Սեբաստիա, Դիարբեքիր–Ս.Ս.)[26]: Իսկ «կատարելապես» ինքնորոշվելու համար անհրաժեշտ է, նախ՝ միավորել տվյալ ժողովրդի բնօրրանը կազմող բոլոր տարածքները, ապա այդ տարածքի վրա այդ ժողովրդին հնարավորություն ընձեռել ազատ կամքով ընտրելու իր ապագան: Այսինքն՝ հայ ժողովրդի պարագայում ինքնորոշման համար նախ անհրաժեշտ է իրականացնել «ազգային միավորումը»:

Հեղինակի կարծիքով, հարցի վերաբերյալ ռուսական կողմն էլ իր մոտեցումները ձևակերպել է «Հայաստանն առանց հայերի» և այնտեղ «Եփրատեան քաղաքակրթութիւն հիմնելու» տխրահռչակ դրույթով: Այնուհետև վկայակոչելով ռուս քաղաքական գործիչ Սկոպլևի ձևակերպումը, թե՝ «հայ ժողովուրդը նոյնպէս երաշխիքներ պէտք է ունենայ իր ապագայ գոյութեան համար, եթե ոյժերը բաւեն՝ անկախ գոյութեան համար»[27], պարզաբանում է, որ այն ավելի աննպաստ է հայ ժողովրդի համար, քան եվրոպացիների վարկածը: Քանի որ այս դեպքում բոլորովին չի պաշտպանվում փոքր ազգերի ինքնորոշման իրավունքը:

Հեղինակը որպես ավելի առաջադեմ և հայանպաստ դիրքորոշում է նշում Ռուսաստանի Հանրապետության Ժամանակավոր խորհրդում հայկական խմբակի կողմից Ջևելեգյանի առաջ քաշած տեսակետը՝ հայ-

[24] Նույն տեղում, էջ 25:
[25] Նույն տեղում, էջ 26:
[26] Նույն տեղում, N 3, հունվար, 1918, էջ 17:
[27] Նույն տեղում, էջ 19:

կական վեց վիլայեթների հետ Կիլիկիայի միացումով անկախ «Նոր Հայաստան» պետության ստեղծումը, որը պետք է գտնվի բոլոր պետությունների երաշխավորության ներքո:

Գրականագիտական բարձրարժեք վերլուծական է Գարեգին Լևոնյանի «Հայազն հնդիկ բանաստեղծ XVI դարում» հոդվածը: Ամսաթերթում տեղ են գտել նաև մի քանի գողտրիկ «Արձակ երգեր», որոնք հեղինակել են Արաքսի Մովսիսյանը, Ռաֆայել Զարդարյանը, Մեխակը, Վահան Թոթովենցը, Նորայր Ազգունին:

«Միջազգային կեանք» բաժնում խոսվում է շարունակվող պատերազմի և դրա կործանարար հետևանքների մասին, և կարևորվում է այն գաղափարը, որ պատերազմից տուժում են անխտիր բոլոր ժողովուրդները: «Գլոբուս» կեղծանունով հեղինակը, պատերազմը համարելով խոշորագույն չարիք, շեշտում է, որ ռուսական հեղափոխությունից հետո դաշնակիցներն էլ ավելի մեծ ջանքեր պիտի ներդնեն, որպեսզի կարողանան հաղթանակ տանել: «Քրոնիկոն» վերլուծականում հեղինակը ողջունում է Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը, Կերենսկուն համարում «ռուսական հայրենիքի մեծագոյն յեղափոխական», սակայն մերժում է մեծամասնականներին ու նրանց իրականացրած հոկտեմբերյան հեղաշրջումը: Քանի որ, պարզաբանում է նա, դրանով խախտվեց ուժերի հարաբերակցությունը, և հետաձգվեց մոտալուտ հաղթանակը: Այսինքն՝ դրա հետևանքով պատերազմն էլի կշարունակվի, ու նոր զոհերի ու ավերածությունների առիթ կլինի: Բացի այդ, մեծամասնականները տարաբնույթ դեկրետների հեղեղով նպաստում են, որ ռուս զինվորները զանգվածաբար լքեն ռազմաճակատները, իսկ դա հայերի համար կործանարար կլինի: Թերթը կոչ է անում առժամանակ մոռանալ «տնտեսական-դասակարգային բոլոր վէճերը և սկսիլ դարբնել ազգերու ազատագրութիւնը»[28]:

Համարի վերջում առկա են մի քանի հայտարարություններ «Հայկաշեն» թերթի հաջորդ համարն ուշացնելու և այդ պատճառով երկու համարը միասին տպագրելու, ՎՀԿ ծրագրային հարցերի վերաբերյալ, «Փորձ ազգութիւնների մասին», «Շապին-Գարահիսարի ապստամբութիւնը» գրքերի և «Հայաստան» թերթի մասին:

[28] Նույն տեղում, էջ 46:

«Հայկաշենի» երրորդ համարը լույս տեսավ 1918 թ. հունվարին՝ «Ծանրակշիռ դէպքերու նախօրեակին» խմբագրականով: Ներկայացնելով Ռուսաստանում հեղափոխություններից հետո ստեղծված քաոսային վիճակը՝ հեղինակը նշում է, որ Կովկասը ևս ենթարկվեց դրանց քաղաքական ու ռազմական ազդեցություններին և կանգնեց «մռայլ անակնկալներու և նոր հնարաւորութիւններու հանդէպ»[29]: Թերթի կարծիքով, եթե տարածաշրջանի մահմեդականները կտուժեն տնտեսապես, գեղեցիկ Վրաստանը կավերվի, ապա հայերին կսպառնա ֆիզիկական բնաջնջումը: Հետևապես, հայերը մեկ մարդու նման պետք է ոտքի կանգնեն՝ ինքնապաշտպանության համար: Խիստ կարևոր են նաև սկսված տարակարծություններին տուրք չտալը և հայ-վրացական դարավոր ջերմ հարաբերությունները ավելի սերտացնելը: «Եթե ըլլանք կտրուկ, արագ և գործնական, անսահման զոհաբերութեան և շրջահայեաց հեռատեսութեան ընդունակ, այն ատեն կ'երևի, որ պատուով ապրելու սրբազան կտակը դեռ վառ է հայ սրտերուն և մտքերուն մէջ»[30],- եզրափակում է խմբագրականի հեղինակը:

Հովհաննես Մազմանյանը «Թուրքիան և հայերը» վերլուծականում նշում է, որ «քաղաքակրթական ձեռնարկներուն մէջ անընդունակ օսմ. պետութիւնը կատարեց նախճիրներուն ամենէն ահռելին, ջնջելու համար Հայկական հարցը, հայերը ջնջելով»[31], քանի որ դեպի Արևելք իր առաջխաղացման ու ընդարձակման միակ խոչընդոտը նրանք էին: Վերափոխումների ձգտող Թուրքիայի համար հայը «փուշ էր իրենց աչքին», իսկ իրականում ինքն էլ եվրոպացիների համար վերածվել էր հասարակ մի շուկայի, որտեղ կարելի էր գնել ամեն ինչ: «Մրցակիցներու պազարը պիտի դառնար մրցակիցներու կրկեսը», - գրում է հեղինակը, ապա ավելացնում, որ տխուր վախճան էր լինելու թուրքերի համար: Իսկ հայ ժողովրդին կոչ է անում համախմբվել, քանի որ 16-րդ ու 61-րդ հոդվածների փոխարեն հնարավորություն էր ստեղծվել ինքնուրույն տնօրինելու ապագան: «Ապագային համար» վերլուծականի հեղինակը, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունը, հորդորում է չտարվել տեսիլքներով, «կարենալ չափուիլ այսօրուան կեանքի պահանջներուն հետ», որպեսզի հնարավոր

[29] Նույն տեղում, N 3, հունվար, 1918, էջ 2:
[30] Նույն տեղում, էջ 4:
[31] Նույն տեղում, էջ 5:

դառնա նաև մտածել ապագայի մասին[32]: Նա նշում է, որ վաղ թե ուշ գալու է այն օրը, երբ իրենց օտարածին գաղափարներով ժողովրդին առաջնորդած ու կործանման եզրին հասցրած օտարամոլ ուժերը չպիտի կարողանան խուսափել պատասխանատվությունից. «Պատմութիւնը օր մը անժխտելիօրէն պիտի հաստատէ, թե այս բացասական արդիւնքին մեջ յանցաւորութեան ինչ բաժին ունէին անոնք»[33]:

Հոդվածագիրն անդրադառնում է նաև Հայաստանի ապագա կառավարման ձևի մասին քննարկումներին: «Երբ դեռ ազատութիւնը չկայ, դեռ հայրենիքն էլ փաստօրէն չկայ», և ինքնուրույն կառավարմանը հասնելու դժվարություններն առջևում են, գրում է հեղինակը, դրա կառավարման ձևի վերաբերյալ վեճերով անիմաստ է զբաղեցնել ու «տարափեղկել» հայությանը: Վաղաժամ է ու վտանգավոր, մանավանդ որ «ազատութիւնն ու կառավարութիւնը իրենց հրապոյրը կորուսած են այս ժողովուրդին համար»[34]:

Շարունակելով նույն ոգով՝ հեղինակը ներկայացնում է տարբեր քաղաքական ուժերի մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ: Ռուս սոցիալիստների ամենասիրած «Պրոլետարներ, բոլոր երկրների, միացեք» նշանաբանի օրինակով հոդվածագիր Թաթուլը նշում է, որ այդ սեթևեթանքները հայ ժողովրդի համար խիստ վտանգավոր են, ապա վստահ եզրակացնում, որ ամենաճիշտը «Բոլոր աշխարհի հայեր, միացէք» կոչ-նշանաբանն է, որ պիտի հնչի ամենուր և արմատավորվի յուրաքանչյուր հայի սրտում:

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ «Ազատագրական հոսանքի վերլուծումը» վերնագրով տեսական-գործնական հոդվածի հեղինակ Լ. Թյությունջյանը նշում է, որ արևմտահայ մտավորականությունը «արտահայաստանյան էր» և ավելի շատ տարված էր օտարերկրյա դիվանագիտության «կայծկլտումներով», որի հետևանքով էլ այն ավելի «նուազ քուէ շահեցաւ երկրէն՝ քան կովկասահայ ռոմանթիզմը»[35]: Ավելին, այդ ռոմանտիկ երիտասարդներն աստիճանաբար շրջվեցին դեպի ռեալիզմ, և հակասություն առաջացավ

[32] Նույն տեղում, էջ 9:
[33] Նույն տեղում:
[34] Նույն տեղում, էջ 12:
[35] Նույն տեղում, էջ 15:

հին դպրոցի՝ ռոմանտիկների ու նորի՝ ռեալիստների միջև: Հեղափոխությունն էլ արագացրեց ու խորացրեց ներքին շերտավորումը, «քաղքենիութիւնը հարկադրական կարիքը զգաց ամուր հիմքերու վրայ դնելու դասակարգային սօցիալ-քաղաքական տիրապետութիւնը, և մեջտէղ եկաւ Հայ Ժողովրդական կուսակցութիւնը»[36]:

«Միջազգային կեանք» բաժնում այս անգամ ևս քննարկվում են համաշխարհային պատերազմին, պատերազմող կողմերի քաղաքական ու տնտեսական վիճակին առնչվող և պատերազմից հետո հաստատվելիք կացության հնարավոր տարբերակների վերաբերյալ հարցերը: Համարում տեղ է գտել մի ուշագրավ հայտարարություն այն մասին, որ թերթի խմբագրությունը տարեկան մի քանի անգամ 20-ական օրինակ «Հայկաշեն» է նվիրում դպրոցներին և 10-ական՝ ռազմաճակատի զինվորներին:

«Քրոնիկոնում» էլ շեշտվում են մատաղ սերնդի կրթության կարևորությունը, ուրիշների վրա հույս դնելու վնասակարությունը և սեփական ուժերին վստահելու անհրաժեշտությունը. «Դարձեալ մեր ոյժերուն պիտի վստահինք, ժողովուրդ մը որ արի վճռականութեամբ մահ կամ ազատութիւն կաղաղակէ, այդ ժողովուրդը չի կորսուիր և չի յաղթուիր»: Մեզ սերտ միասնություն է անհրաժեշտ և կարգապահություն, ահա փրկության ճանապարհը, շեշտում է հեղինակը:

«Հայկաշենի» չորրորդ համարը լույս է տեսել 1918 թ. փետրվարին: Առաջին էջին Անդրանիկի լուսանկարն է, որի ստորին հատվածում գրված է՝ «Անդրանիկ. Հայաստանի երկրապահ զօրամասի ընդհ. հրամանատար»: Դրան հաջորդում է «Պորիս» կեղծանունով հեղինակի «Ո՞վ է Անդրանիկը» հրապարակումը: Ներկայացնելով հայ ժողովրդի պատմության վճռորոշ կեռմաններում գործած հերոսներին և նրանց համարելով ժամանակի թելադրանքով լույս աշխարհ եկածներ՝ հոդվածագիրն իր օրերի «մեծավայելուչ ժառանգը» համարում է Անդրանիկին[37]: Մեծարելով ազգային հերոսին՝ հեղինակը նշում է, որ նա սովորական մահկանացու չէ: Որ նրան նույնիսկ կուսակցական կաղապարները չկարողացան պատնեշել գաղափարախոսության սահմանագծերում: «Բառին լայն իմաստով, - գրում է Պորիսը, - Անդրանիկը հայ Կարիպալտին է»[38], իսկ

[36] Նույն տեղում, էջ 17:
[37] Նույն տեղում, N 4, փետրվար, 1918, էջ 82:
[38] Նույն տեղում, էջ 83:

նրան քննադատողները՝ ոչ իրատեսներ: Քանի որ հայ ժողովրդի ազատագրումից բացի նա չունի ուրիշ «դաւանանքներ, կրօն, հասարակական ու տնտեսական խնդիրներ...»[39]:

Համարում տեղ է գտել «Վասակի վարձք» հետաքրքիր վերլուծականը, որը որպես հարգանքի տուրք՝ ձոնված է «Արագած» պարբերականի վաղամեռիկ խմբագիր Մուշեղ Շահինյանի (Սարորդի) հիշատակին: Հոդվածն ամբողջությամբ հայրենասիրության և փորձությունների պահին հայրենիքին անմնացորդ նվիրվելու մասին է: Վասակ-Վարդան հավերժական թեմայի քննարկման հետնախորքի վրա հեղինակը համոզված գրում է. «Առանց հայրենիքի վերածնունդ չկայ. առանց պատմական յիշողութեան Ազգը կը մեռնի»[40]: Ներկայացնելով իրեն ժամանակակից մի քանի հերոսների (օրինակ՝ Մուշի հերոսական ինքնապաշտպանության քաջամարտիկ հաջի Հակոբ Կոտոյանին) և հասարակական-քաղաքական գործիչների (Միհրան Սվազլյանին, Կիմ Չանգալյանին, Ջոն Թագաքչյանին)՝ հեղինակը գրում է. «Ազգը վերապրեցնելու վսեմ պատասխանատուութիւնը այս պառակտեալ, բայց քաջակորով սերունդին յոգնաբեկ ուսերուն վրայ ծանրացավ»[41], որը, մերժելով վասակներին, հավատարիմ մնաց իր պատմական ուխտին և փորձում է բոլոր ուժերով տեր կանգնել հայրենիքին:

Շարունակելով նույն ոգով՝ հայրենիքի համար ոչինչ չխնայելու գաղափարն են ջատագովում նաև Վարդանանց նվիրված հոդվածի ("Gloria Victis") հեղինակ Էդուարդը, քաղաքական փոփոխություններից չերկնչել հորդորող Ն. Դշխոյանը («Հերոսներու ուղիով ընթանանք»), Մամիկոնյան տոհմի սխրանքները մեծարող Հ. Մազմանյանը («Հայկական Աւարայր»), «Աւանդական ոգու» հեղինակ Թաթուլը, «Նորէն Վարդանանց օրերի» մասին գրող Վահրամ Նորիսը և այլք:

Հայ մարդու քաղաքական անուղղելի ռոմանտիզմի և ուրիշներին աներկբայորեն հավատալու բացասական հատկանիշների մասին է Պարթևի «Հայ քաղաքական իդեալիզմը» հոդվածը: Պատմական էքսկուրս կատարելով՝ նա զարմացած ու զայրացած հարց է հնչեցնում. «Մինչև

[39] Նույն տեղում:
[40] Նույն տեղում, էջ 88:
[41] Նույն տեղում, էջ 91:

ե՞րբ պիտի շարունակուի մեր այդ ռոմանթիք քաղաքականութիւնը, այդ իւրատեսակ իտէալիզմը»[42]:

Նույն թեման է շարունակում նաև Գ. Լևոնյանը: «Վարդան Մամիկոնեան եւ Մեսրոպ Մաշտոց» հետաքրքրական հրապարակման մեջ, դիմելով պատմությանը և նշելով, որ V դարը «վերին աստիճանի նշանաւոր է» հայոց պատմության մեջ, հեղինակը գրում է, որ Արևելքի բռնապետության և Արևմուտքի կաշկանդիչ ազդեցության այդ շրջանում «երեւան եկաւ հայ ժողովրդի ֆիզիքական և մտաւոր ոյժերու հաւաքական խմբաւորումն ու թափը»[43]: Նրանք բազկի ու մտքի հնարագիտության շնորհիվ հեռացրին Հայոց աշխարհին սպառնացող վտանգը: Հետագայում միայն ոսոխների անունները փոխվեցին, իսկ հայ ժողովուրդը մնաց անսասան: Շեշտելով այդ զույգ հերոսների հայապաշտպան գործունեությունը՝ հեղինակն արձանագրում է. «Թող սերնդից սերունդ ու հայ մտքերից անբաժան մնան այս երկու նվիրական անունները»[44]:

Համարի վերջում տեղ են գտել նաև Ա. Արմանի, Խ.Պ.-ի, Անահիտ Մ.-ի, Հ. Մազմանյանի, Վ. Թոթովենցի, Գ. Մելոյանի հայրենասիրական ոգով տոգորված գեղարվեստական մի քանի ստեղծագործություններ: «Կառավարման ձև» ենթաբաժնում հեղինակը «քննում է» միապետությունից մինչև հանրապետություն կառավարման տարբեր ձևերը, նշում դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները և իր անթաքույց համակրանքն արտահայտում հանրապետական կառավարման նկատմամբ[45]: Համարի վերջում կան նաև մի քանի կարևոր հայտարարություններ անձնակազմի ռազմաճակատ մեկնելու կապակցությամբ «Հայաստան» թերթի հրատարակության դադարեցման, իրենց թերթին նվիրված գումարների և նվիրատուների ազգանունները, «Հայկաշենի» նոր հասցեն (Բեյբութովսկայա, թիվ 30) և այլն:

«Հայկաշենի» վերջին՝ 5-րդ և 6-րդ համարները միասին լույս են տեսել 1918 թ. ապրիլին: «Վճռական անցքեր» խմբագրականում արձանագրելով, որ «Վճռական անցքերու մեծ թուական մը կ'ապրի Կովկասը պատմա-

[42] Նույն տեղում, էջ 103:
[43] Նույն տեղում, էջ 107:
[44] Նույն տեղում:
[45] Նույն տեղում, էջ 120:

կանապէս»[46], հեղինակը կանխատեսում է՝ երկրամասը, հավանաբար, նոր սահմանագծումներ կունենա: Այնուհետև նշում է, որ ինքնավարության մոտալուտ գաղափարից խանդավառված հայ ժողովուրդը, սակայն, Էրզրումը հանձնելով, ծանր կորուստ ունեցավ: Այն «մահացու հարուած տուաւ Տաճկահայաստանի սրբազան դատին»[47]: Հետևապես, հեղինակի կարծիքով, հարկավոր է խելքի գալ և ուժեղ «գործօններ հրապարակ բերել շահելու համար այն, ինչ որ դեռ կարելի է»[48]:

«Հաւատքի պակասը» հոդվածում Ն. Ազգունին գրում է, որ ինչպես անհատների, այնպես էլ ազգի դեպքում, երբ հավատը կորսվում է, «նա կը դառնայ խաղալիք ամէն հոսանքէ փչող քամիներու դէմ և անընդունակ ոևէ ստեղծագործող և շինիչ դեր կատարելու»[49]: Հեղինակի կարծիքով, հենց դրա հետևանքով էր, որ զորքը թալանով էր զբաղված և չցանկացավ ռազմաճակատ գնալ, իսկ ղեկավար գործիչները կամ չնկատելու էին տալիս, կամ փորձում էին դա բացատրել զանազան արհեստածին պատճառներով, որոնք ընդամենը «իրականութիւնը քողարկելու միայն կը ծառայէն»: Այդ ամենը խորությամբ դիտարկելու դեպքում, ըստ հոդվածագրի, պարզ էր դառնում, որ մեր ժողովրդի «հոգւոյն մէջ հաւատի պակասը կայ»: Նա չունի կյանքի նկատմամբ այն ռոմանտիկ ըմբռնումը, որն ուներ ազատագրական-ֆիդայական պայքարի ընթացքում[50]: Այդ հավատազրկման արմատներն ու պատճառը հեղինակը տեսնում է տասնամյակներ շարունակ պայքարը ղեկավարած գործիչների թույլ տված սխալներում. «Մեր ժողովուրդը իմաստակացած է, - գրում է Ազգունին, - որովհետև թոյլ տուած է որ տարիներէ ի վեր իր ծոցին մէջ վխտացող և զինք շահագործող շահամոլ, փառասէր և թեթևսօլիկ գործիչներ լարախաղացութեամբ իր ճակատագրին հետ խաղան...»[51]:

Ժողովրդի հավատի կորստյան համար մեղադրելով օրվա ղեկավար կուսակցությանն ու գործիչներին և քննադատելով նրանց՝ նա միաժամանակ իր համակրանքն է արտահայտում Մ. Պապաջանյանի նկատմամբ. «Մեր ժողովուրդ այնքան անտարբեր է դարձել, որ չի հետա-

---

[46] Նույն տեղում, N 5–6, փետրվար, 1918, էջ 121:
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում, էջ 122:
[49] Նույն տեղում:
[50] Նույն տեղում, էջ 125:
[51] Նույն տեղում:

քրքրուիր իր վարիչներով, դրա համար էլ Մ. Պապաջանեանի պէս փորձառու անհատներ կը անտեսուին, որովհետև անոնք դժբաղդ բերումով մը տարբեր կուսակցութեան մէջ կը գտնուին»[52]: Իսկ ստեղծված տխուր կացությունից դուրս գալու համար որպես դեղատոմս հեղինակն առաջարկում է. «Ժողովուրդի ողնաշարին վերջնական ջախջախման սպառնացող «մուրճավորները» կամ քաշուին հրապարակէ և կամ կուսակցամոլութենէ կուրցած իրենց աչքերը բուժել տան»[53]:

«Հայրենիքին և ժողովուրդին համար» հոդվածում Թաթուլն էլ ցավով արձանագրում է, որ հասարակության բոլոր խավերը հայ ժողովրդին սպառնացող վտանգն ամբողջությամբ չեն գիտակցում, և յուրաքանչյուրը սեփական շահի համար զբաղված է ինքնագործունեությամբ: Մյուս կողմից էլ տարբեր քաղաքական ուժեր, դասակարգային հակադրություններ քարոզելով, պառակտում են ազգը: Այնինչ, գրում է հոդվածագիրը, հայ ժողովրդի գոյությանն սպառնացող այդ վտանգավոր պահին «կուսակցական տարբերութիւններ և դասակարգային շահերու հետապնդում ներելի չէ մեր ազգին համար»[54]: Ոչ էլ կարելի է տեղ տալ արևելահայ կամ արևմտահայ հատվածականությանը, որը կարող է առանց այդ էլ կործանման եզրին հասած ժողովրդի համար աղետաբեր լինել: Հոդվածագիրը ամփոփելով նշում է, որ միայն աներեր հավատը, միասնականությունը և հանուն հայրենիքի ամեն ինչ զոհելու պատրաստակամությունը կարող են բաղձալի հաղթանակներ պարգևել:

Մ. Վանիկն էլ Օդեսայից, վկայակոչելով պատմական մի շարք հերոսական դրվագներ «Ի զէն հայեր» հրապարակման մեջ, բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին և նույնիսկ հայ կանանց կոչ է անում խորությամբ գիտակցել պահի ողջ լրջությունը և դիմել զենքի, «քաջաբար մարտնչել մինչև արեան վերջին կաթիլը» և հաղթելով թշնամուն՝ զգալ ազատության «իսկական համն» ու «պայծառ արշալույսը»[55]:

«Ապագայի համար» հրապարակման մեջ, շարունակելով Հայաստանում ստեղծվելիք կառավարման համակարգի հիմնախնդիրը, Թաթուլը գերադասելի է համարում «ամէն անհատի ազատ ու հաւասար

[52] Նույն տեղում:
[53] Նույն տեղում:
[54] Նույն տեղում, էջ 127:
[55] Նույն տեղում, էջ 128-130:

ընտրութեամբ ստեղծուած ներկայացուցչական» կառավարման համակարգը[56], որտեղ միմյանցից անկախ պիտի գործեն գործադիր, դատական և օրենսդիր մարմինները: Բոլոր բնագավառներում իշխող պիտի լինեն ժողովրդականությունն ու ազատ նախաձեռնության հնարավորությունը: Հայաստանում իշխանությունը պիտի պատկանի ամբողջ ժողովրդին:

«Հայկական հարցի վերջին փուլերը» հոդվածում Պարթևը քննարկում է բոլշևիկյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ: Ինչպես հայտնի է, մեծամասնականները, իրենց որդեգրած նշանաբաններին հավատարիմ, այլ հարցերին զուգընթաց, «թղթի վրայ հրովարտակով լուծեցին նաև «Տաճկահայաստանի հարցը»[57]: Դրանով նրանք հայտարարում էին, որ պաշտպանում են «Տաճկահայերու իրաւունքը, ազատ ինքնորոշման, մինչև իսկ կատարեալ անկախութեան համար»[58], որը պիտի իրականացվեր հայ ժողովրդի ազատ հանրաքվեով: Հոդվածագիրը, ներկայացնելով ստեղծված պայմանները, ցավով արձանագրում է, որ դա սոսկ բոլշևիկյան Ռուսաստանի ցանկությունն էր, որն ապահովված չէր ոչնչով: Իրողություն, որը շուտով ապացուցվեց պատմական իրադարձություններով: Այնպես որ, եզրակացնում է նա, աշխարհի հզորները և «անոնց մէջ յաղթողներն են, որ պիտի ըսեն վերջնական խօսքն այդ հարցում»[59]:

Թերթում տեղ են գտել դոկտոր Ս. Ալթունյանի «Բրօֆ. Տ. Լիւիլէճեանի մահուան տարելիցին առթիւ» սրտաբուխ խոսքը, Արաքսի Մովսեսյանի «Ես սուր պիտի առնեմ», Անահիտ Մ.-ի «Գարնան խոհեր», Գ. Գանարիկի «Զղջում», Վ. Թոթովենցի «Լճի ափին. Մէնտօդա», Հայկի «Քուքու», Գ. Մելոյանի «Օջախը (Պատկեր իրական կեանքից)», Ն. Ազգունու «Խաւարման գիշեր», Հ. Վարդանյանի «Զուլղրէն»-ի բացատրութիւնը» արձակ և չափածո գեղարվեստական ստեղծագործությունները:

«Ներքին կեանքում» քննարկվում է տվյալ պահին ստեղծված իրադրությունը, փորձ արվում գտնել բոլորին տանջող հարցի պատասխանը, թե ինչու զինվորը չկռվեց, և ինչու Կարինը հանձնվեց թշնամուն: Հե-

[56] Նույն տեղում, էջ 130:
[57] Նույն տեղում, էջ 142:
[58] Նույն տեղում:
[59] Նույն տեղում, էջ 144:

ղինակը մեծ ցավով արձանագրում է, որ պատճառը հիմնականում անմիաբանությունն է եղել:

«Նամակ խմբագրութեան» բաժնում տեղ է գտել Անդրանիկի պատասխանը գնդապետ Բեժանբեկովի՝ Սարիղամիշից գրած նամակին, որում ազգային հերոսը վկայում է, որ գնդապետն իզուր է մեծ-մեծ խոսում, քանի որ Իլիճա գյուղի մոտ պաշտպանական գիծն առաջին լքողն ինքն է եղել:

Հավանաբար, «Հայկաշեն» թերթի այլ համարներ ևս լույս են տեսել, որոնք, սակայն, մեզ չհաջողվեց գտնել: Հնարավոր է նաև, որ քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունների հետևանքով, թերթը հանկարծակի դադարել է հրատարակվել: Բոլոր դեպքերում մեզ ծանոթ վերջին համարը բոլորովին էլ վերջինը լինելու հանգամանքը չունի: Ավելին, կան նյութեր, որոնք ավարտվում են «շարունակելի» մակագրությամբ: Ենթադրում ենք՝ Թբիլիսիում պահվող որևէ արխիվում պահպանված կլինեն թերթի այլ համարներ ևս, սակայն «Վրաստանի համալսարանական արխիվում» (որտեղ պահվում են տպագիր մամուլի հավաքածուները) առայժմ խառը իրավիճակ է: Արխիվը տեղափոխելու հետևանքով դեռևս հավաքածուները ֆոնդավորված չեն, և հայտնի էլ չէ, թե դա երբ կավարտվի:

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱՇԵՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Թ.

Ամփոփում

1887 թ. ստեղծված Հնչակյան կուսակցության պառակտման հետևանքով 1898 թ. հիմնադրվեց Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը (ՎՀԿ): Վերակազմյալներն ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես մամուլի ասպարեզում: Նրանք հրատարակեցին մի քանի պարբերական:

ՎՀԿ կենտրոնական վարչության օրգան «Հայկաշեն» ազգային, գրական, քաղաքական ամսաթերթը ցարդ բոլորովին ուսումնասիրված չէ: Այն լույս է տեսել 1917-1918 թթ. Թիֆլիսում: Պարբերականը սկսում է հրատարակվել դժվարագույն պայմաններում, երբ անկախության ձգտող

հայ ժողովուրդը փորձում էր կերտել իր վաղվա օրը: Թերթն ուներ *Հայկական դատ, Ազգայնական շարժումը և հայ ազգայնականությունը, Համազգային կյանք, Գրական-գեղարվեստական, Միջազգային կյանք* և այլ բաժիններ:

Վերլուծելով հայության բոլոր հատվածների համար ստեղծված բարդ իրադրությունը՝ թերթի հեղինակներն ընդգծում էին ապագայի նկատմամբ աներեր հավատի, համախմբվելու և սեփական ուժերին ապավինելու անհրաժեշտությունը: Անդրադարձներ կային Առաջին աշխարհամարտին, հայոց ցեղասպանությանը, ռուսական հեղափոխություններին, Հայկական հարցին և այլ կարևոր հիմնախնդիրների:

Բանալի բառեր՝ պարբերական, կուսակցություն, վերլուծական, հոդված, տեսակետ, հայ ժողովուրդ, Հայկական հարց:

"АЙКАШЕН" – ГАЗЕТА-ОФИЦИОЗ РЕОРГАНИЗОВАННОЙ ПАРТИИ ГНЧАКЯН

САРГСЯН С.Т.

Резюме

В результате раскола в рядах созданной в 1887 г. партии Гнчакян в 1898 г. была основана Реорганизованная партия Гнчакян (РПГ).

Реорганизованная партия Гнчакян развернула активную деятельность в сфере периодики. Членами РПГ было основано несколько периодических изданий и в их числе газета "Айкашен", являвшаяся национальным, литературно-политическим ежемесячником, который стал издаваться в Тифлисе в 1917-1918 гг. В отличие от остальных периодических изданий партии Гнчакян газета "Айкашен" по сей день остается не изученной специалистами. Газета издавалась в сложный исторический период, когда стремившийся к независимости армянский народ пытался консолидироваться, не терять веры в будущее и надеяться лишь на собственные силы в борьбе за утверждение национальных идеалов. Газета обращалась к таким животрепещущим темам, как Армянский вопрос, геноцид армян, Первая мировая война, Февральская революция, Октябрьский переворот и

т.д. Газетные рубрики "Армянский вопрос", "Националистическое движение и армянские националисты", "Общенациональная жизнь", "Литературно-художественная жизнь", "Международная жизнь" и т.д. освещали важнейшие проблемы национальной жизни.

Ключевые слова – периодика, партия, аналитический, статья, точка зрения, армянский народ, Армянский вопрос.

"HAYKASHEN" - THE OFFICIAL NEWSPAPER OF THE REORGANIZED HUNCHAG PARTY

S. SARGSYAN

Abstract

In 1898, the Reorganized Social Democrat Hunchag Party was founded as a result of the split in the ranks of the Hunchag Party established back in 1887. The reorganized Hnchakian party was active in the field of press. Its members founded several periodicals, including the newspaper "Haykashen", which was a national, literary and political monthly newspaper, published in Tbilisi in 1917-1918. Unlike other periodicals of the Hunchag Party, the newspaper "Haykashen" remains unexplored up to these days. The newspaper was published in a difficult historical period, when the Armenian people were striving for independence trying to consolidate, not to lose faith in the future and to rely only on their own strength in the struggle to establish national ideals. The newspaper addressed such hot and urgent topics as the Armenian Question, the Armenian Genocide, the First World War, the February Revolution, the October Revolution, etc. Newspaper headings "Armenian Question", "Nationalist movement and Armenian nationalists", "National life", "Literary and Artistic life", "International life", etc. covered the most important problems of national life.

Key words – periodicals, party, analytical, article, viewpoint, Armenians, the Armenian Question.